

ՅՐՈՒՄՆ ԱԶԳԱՅԻ

Ասրդիկ մի և նոյն լեզուն կը խօսէին, երբ Աստուած իրենց հպարտութիւնը և ապստամբութիւնը պատժելու համար՝ խառնակեց իրենց լեզուն, այնպէս որ իրարու գաղտփարները և միաքը չկարենան հասկնալ. և այս կերպով, կ'ըսէ Ս. Գիրք, այն տեղէն ըրուեց զիրենք ընդ ամենայն աշխարհ. Այս խառնակութիւնը պատիժ մըլլալով, ինչպէս կը խորհրդածէ Ս. Օգոստինոս, միայն անոնց մէջ հանդիպեցաւ՝ որք ընկերացան Ներբովիթայ և մտանակեցան աշխարհակաշինութեան բարձրումիտ ձեռնարկութեան. թէպէտ և պարզ իրենց յիշատակը ձգելու նպատակաւ հանգնէին, ինչպէս կ'ուզեն պաշտպանել ոմանք, և կամ ուղղակի Աստուծոյ դէմ ապրտամբելու խորհրդով, Բայց ինչպէս որ ջրհեղեղին հոսանաց մէջ իր արդեանց համար ազտացցաւ արդարն նոյ, այսպէս նաև լեզուաց խառնակութեան միջոց եթերայ տունը նոյն վիճակի մէջ մնաց. և հետեաբար իւր ցեղին մէջ մնաց իրենց սովորական գործածելի լեզուն, որ յետոյ երրայեցերէն Կոշտեցաւ. (Յաղ. Քաղ. Աստուծոյ):

Ուրեմն լեզուաց խառնակութենէ զերջը բաժնուեցան, և իւրաքանչիւր ոք, ինչպէս կ'ըսէ Յովելապոս, գնաց այն երշանիկ երկիրը ուր Աստուած առաջնորդեց իրեն ըստ կանխտած որոշման և նահապեաք առաջնորդը ցեղից Սենաարայ դաշտէն բաժնուելու միջոց՝ անտպատ տեղեր կանկ առին, ուր հաստատուեցան իրենց բազմաթիւ ընաանեօք: այս ընտանիք փոխեցան յետոյ ՚ի ժողովուրդս, և սոքա այլ յազգս: Այս ցեղերը 72 էին թուով. 45 Բարեթայ, 34 Քամայ, և 26 Ումայ - բայց այլք բազումք այս թիւը 73ի կը հանեն, Յայտնի կը տեսնուի որ այլ ևս չէին կրնար կենալ այն դաշտին մէջ և կարևոր էր իրենց բաժնումք: Յաւելունք այս ըսածնուս վրայ, ինչպէս կ'ըսէ Ս. Օգոստինոս, որ նոյայ յաջորդաց ընտանիք ամէնքն ալ Ս. Գրոց մէջ չեն յիշատակուած. Յարեթայ ուժ որդւոց միայն երկուքին սերունդը կը յիշատակուին. Քամայ չորս որդւոց երերը կը յիշատակուին. և Անմայ որդւոց՝ որ թուով վեց էին, միայն երկուքին յաջորդութիւնքը կը յիշուին: Արդ կարելի՛ է ենթազրել որ միւս ցեղագետք անզաւակ վախճանած ըլլան. անշուշտ մխտելի է այս ենթադրութիւնն. սակայն կարելի՛ թէ մասնաւոր ժողովուրդ կամ ազգ մը չկազմեցին, այլ խառնուեցան արդէն ծանօթից հետ նոյն ժամանակ նոր ծնած կամ ձեացած լեզուք ալ պէտք չէ այնքան բազմաթիւ ենթադրել. վասն զի բանագէտք՝ մայր լեզուները սակաւթիւ կ'ենթագրեն, իսկ միւսները իրբե գաւառաբարբառ այս զինաւոր լեզուաց:

Թէպէտն բազմաթիւ ալ ըլլային խօսուած լեզուք, սակայն հարկ է ընդունինք նաև իրը սկզբունք հաստատեալ ի փորձոյ, թէ ժամանակը կը կ'ընդարձակէ լեզուաց ասպարէզը, և այսպէս անհամաձայն լեզուներն կը փոխէ ի դաւառարարբառաւս և կը պակսեցնէ զթիւն. մինչգեռ միւտ կողմանէ ալ գաւառաբարբառոց տարբերովիւնն կ'եզծանէ և կը փոխէ զանոնք ի մի և նոյն լեզու. այսպէս ալ կ'ընդարձակէ և կը միացնէ քաղաքական միաբանութիւնն, և զցեղն կը փոխէ ի ժողովուրդս և զժողովուրդս յազգս.

Մարդկանց այս բաժանումն, ըստ Սրբայն Հերոնիմոսի և այլ բազմաթիւ հմտից, եղաւ յետ ծննդեան ֆաղեկայ. նոյն իսկ՝ եթէ եկտան անդրանիկ եղբայր՝ եղած ըլլայ, ըստ որում կը համարին ոմանք՝ երկրորդ անուաննելով միայն, կամ ճշմարտիւ իսկ կրտսեր եղբայր՝ իւր հայրն երեր լուսաւորեալ յԱլստուծոյ, գուշակեց զրաժանումը և այլոց ևս հաղորդեց, և Փաղէկ անունն տուուա իւր որդւոյն, որ կը նշանակէ Բամանումն. Յիրաւի, ըստ տեսութեան Ս. Օգոստինոսի, Եկտանայ երկոտասան որդիքն այնպիսի մեծ ընտանիքներ կազմեր էին ցրման ժամանակ, որ կարող եղան բաժնուիլ յազգս: Փաղէկ ապրեցաւ 239 տարի, ուստի և հաւանական կարծեզք հնար է համարիլ թէ այս բաժանումն, ըստ ժամանակագրութեան Վուշաթայի, հանդիպած պիտի ըլլայ ի վերջ կոյս երրորդ գարուն, կամ ի սկիզբն շորորդին: Ներբովթ դեռ կենդանի էր նոյն ժամանակ, չըրբորդ որդի ըլլալով նոյայ բամայ ցեղէն. և այս սերունդք 400 տարիէն աւելի կեանք ունէին, ինչպէս կը տեսնենք Սուլիէի և Երերայ կենաց մէջ, որ աւելի յետոյ էին ժամանակաւ: Ըստ Յովսեպոսի՝ Ներբովթ բաժնուելով Սենաարայ դաշտէն՝ Մեսրայիմայ որդովիթը բնակեցաւ ի մէջ Գալայի և Եգիպտոսի: ի հաստատութիւն այս ըստաներուն՝ Երնընդոց գիրքն մէջ կը բերէ թէ ոչ ի ծննդեան ֆաղեկայ, այլ նորա կենաց ժամանակ բաժնուեցաւ Երկիրը, յաշուրս ևորա (զԼ. Ժ. 25):

Իսկ թէ ինչ ազգեր նոյայ իւրաքանչիւր որդւոցմէ ձևացան, որուշեն իսիստ գծուարին է, չունենալով ի ձեռս ճիշտ և ստոյդ յիշատակարաններ, այլ պարզ ենթաղրութիւն: մանաւանդ որ Ցոյնք, ըստ գիտողութեան Յովսեպոսի, Նախին անուանքն փոխած են: Այսու հանդերձ՝ ըստ նոյն և ուրիշ հմտաշանձանց պիտի դնենք հետևեալ ծագումն ազդաց:

Յարեթայ վիճակեցաւ Եւրոպա, և իւր անդրանիկ որդիէն ի Գումերայ՝ ծագեցան կիմբրացիք և Գերմաննք: Մագոդ կոչեց իւր սերունդը Սկիւթացիք, Գեզք և Մասսագեզք: Կարձեալ Յաբեթայ որդիք և զան Մադայի և Յաւան: Մադայէ առաջ եկան ըստ հասարակաց կարծեաց, Մեդացիք, և Յաւանէն Հոնք, և թերես իսկ ամենայն Ցոյնք: Ուրիշ որդի մէր Յաբեթայ թուզրալ, և ըստ Հերոնիմեայ եղաւ իշխան իւրացւոց, որ արդ են Սպանիացիք: իսկ ի Մոսոքայ և Թի-

բասայ՝ որ էին իւր յետին սերունդքն, ծագեցան Ռուսք, և ըստ այլոց ժողովուրդքն կապագովվիլոյ և Թթակիոյ ։ Գոմեր երեք որդիք ունեցաւ. Ասքանազ՝ որ իւր անունն առուալ փոքրւն Ասիոյ և բնակեցաւ Բիւթանիոյ մէջ, Ասիփատ իշխան եղաւ. Պաֆղագոնիոյ ժողովրդոց, և Թողորման Թուրքմաններուն կամ Թուրքաց, Վերջապէս Յաւանայ սերունդներէն՝ որ և նա որդի էր Յարեթայ, ծագեցան, Եղիսյէ՛ Գոթացիք, Թարսսիսէ՛ Տարսոնացիք, և այլ ժողովուրդք Կիլիկիոյ. ի Քետիմէ Մակեդոնացիք և արիշ ժողովուրդք մերձաւոր կղզեաց. ի Դրդանիմէ՛ Եպիւսոսի Դոդոննեցիք:

Քամ չորս որդիք ունեցաւ. իւր անդրանիկին Քուշայ, Կ'ըսէ Ցովս սեպոս, չմնասեց Ժամանակը, վասն զի Եթովպացիք, որոց ինքն իշխան եղաւ, մինչև ցայսօր թէ իրենց մէջ թէ յԱսիացւոց Քուշացիք կը կոչուին. Սակայն դիտելու է հսու որ Եթովպիիս, ըստ յոյն աշխարհադրաց կը բովանդակէր զերկիրս որ են յիշերս կարմիր ծովու թէ յԱսիա և թէ յԱփրիկէ. Հերոդոտ կը խօսի արևելքան և արևմտեան Եթովպացւոց վրայ, և ամէնքն այլ մի և նոյն սերունդէ ծագեալ Կ'երեին, որ են Արաբք Նոյնպէս Մեսրայիմայ անուան հին յիշատակն պահուեցաւ. վասն զի Եգիպտոս կը կոչուի նաև Մեսրիմ և Եղիպտացիք Մեսրիք. Փութ զՄարիտանիա կարգի գրաւ, ուր կայ և համանուն գետ մ'ալ, իսկ քանան որդի Քամայ բնակիերվ Հրէատանի մէջ, իւր անուամբ կոչեց Քանան: Դարձեալ Քամայ որդիք և զան Սարա՝ Հայր Սարէացւոց, որք հոչակեալ են յԱրարիա իրենց խունկիրովն. Եւիլա, որ ըստ Ցովսեպոսի իւր որդիքն կոչեց կեղուլք (Քարամանք) որ են բնակիչք Ափրիկոյ մէջ Փիցցանիոյ մերձաւոր տեղեաց, որ Կ'երեի թէ այժմեան ցիսն է. Սարաթա՝ յորմէ Սարաթացիք յԱրարիա. Բէկմա՝ յորմէ Բէկմայք, և են բնակիչք Պարսից ծոցին. Սարաթակա՝ յորմէ Սարաթակեայք. յետինքն՝ ըստ Պոշարի, անցնելով յԱրարիայէ ի Քարամանիա, յիշատակ մը թողուցին իրենց անուան և Ներքովմայ վրայ խօսեցանք վերը: իսկ ի Մեսրիմայ ծնան, Լուդիմ՝ որ բնակեցաւ յԵղիպտոս. Լաւարիմ՝ որ Ափրիկոյ արւաւ զանուն Լիրիոյ. Անամիմ, ըստ օմանց, բնակեցաւ ի Թերայիդ ի բարձրն Եգիպտոս, ուր ի Թերէ որ մայրաքաղաքն էր, կը գտնուէր Արամազդայ Ամմանի նուիր՝ ալ տաճարը, որ Ս. Գրոց մէջ ալ կը յիշատակուի: ի Նեփիմէ ծագեցան Նումիդացիք. ի Փերաւողիմէ Փղշտացիք, որք յետոյ, ըստ Ցովսեպոսի, Պաղեստինու անունն տըփին. ի Գաալի/է Կափդորիմք՝ և բնակիչք կրետէ կղզույն: իսկ Քանան Քամայ միւս որդին ծնաւ զԱփրոն, որ ի Փիւնիկէ շինեց զքաղաքն Ափրոն, և եղաւ Հայր այն ժողովրդեան: իւր միւս որդւոցմէ ծնան, Ամադեւոնէն՝ Ամադեայք, որք Ցովսեպոսի Ժամանակ ալ այսպէս կը կոչուէին, և էին ի Ցունաց Եպիփանիա կոչուած տեղւոյն մէջ. Արագիսէն՝ Արատք, նոյն անունն կրող կղզեաց մէջ. Արակէոսէն ծագե-

տաւ Արկէոս ի Լիբանան . Սամարէոսէ Սամարիան , և միւտ որդոց , այն է Հելետէոս , Գերուսէոս , Գերգեսէոս , Եվէոս , Ամորէոս , Սինէոս որոց միայն անուանքն հասած են առ մեզ , կըսէ Յովեպոս , որով հետեւ Հրեայք կործանեցին իրենց քաղաքներն :

Նոյայ երրորդ որդին Սեմ բնակեցաւ յնսիտաւ իւր որդիքն եղան իրամ , յորմէ ծագեցան իրամացիք , արդ Պարսիկը . Ասուր՝ որ շնորհ զնինուէ և իւր ժողովուրդն կոչեց Ասորի . Արփաքսադ եղաւ իշխան Քաղէտաստանի , յորմէ և անունն ընդունեցաւ . Լուդ յորմէ և բնա կիշք Լիւզիոյ . Արամ , որ եղաւ հայր Արամեանց , և բնակեցան ի Միջադեմա և յԱսորիս : Արամ ծնաւ զշուռ՝ որ հիմնեց զիամասկոս , և իւր անունն զրաւ մերձաւոր գաւառին զոր երրայեցիք կը կոչեն Աւսիդ . իսկ Հուսայ սերունդն բնակեցաւ ի Հայատան . Կէթէր՝ ըստ Հերոնիմոսի է իշխան կարից ի փոքրն Ասիա . իսկ Մէս իւր անունն առուաւ Մասիս լերան որ է ի Միջագետոս : Վերջապէս Արփաքսադ՝ որդի Սեմայ ծնաւ զԱսղէմ , յորմէ ծագեցան ժողովուրդքն Սուսայ և եղաւ հայր Երերայ , որոյ անունըն ըստ Յովսեպօսի , կոչուեցան Երրայեցի : Երկու որդի ունեցաւ սա , Փաղէկ , որուն ժամանակ՝ ինչպէս յուսաջ ալ ըսինք , եղաւ Երկրիս բաժանումն , և Եկտան՝ որոյ Երեքտասան որդիքն բարածուեցան կոփէնէս գետէն մինչև ի Հընդ . կաստան և մինչև յաշխարհս մերձաւոր Աֆղաններու և մինչև ի լեռն սոսունս թիպեղի : Ողքա են , Եմնատատ , Սաղեփ , Ասարմութ , Հարէ (ըստ բազմաց) , Ագուրամ , Ռւզալ , Դեկլա , Երալ , Արիմայէլ , Սարա , Ոփիր , Եւիլա , Յովբաթ :

Մարդկանց քաղաքական այս բայանումն յազգս , պատճառ եղաւ միանգամայն տեղագրական ուրիշ բաժանմանց և տարրերութեանց ընկերական վիճակին մէջ . Սենաարայ գաշտէն բաժնուելու ատեն ամենայն ընտանիք պահեցին և աճեցուցին այն նախկին կրթութիւնն որ ընդուներ էին : Ըստ պանդութեան հնոց , ընդարձակ գաշտերու մէջ իշնելէ առող հաստատուեցան մարդիկ ի Երինս և ի Ճորս , հաստատուն բնակութիւն ընելով և ընդարձակելով զմշակութիւն , զգիտութիւնն և զարուեսս , որ ստացեր էին : Այս բանիս վկայ է , բաց յայլոց և դիտնեսիս Աղիկառնայիք , որ կըսէ թէ շինեց փոքրիկ բնակարանն մերձաւորս լերանց , ինչպէս սովորութիւն էր հնոց մէջ . Մեր առաւած ժողովրդոց անուանակոչութենէն յայտնի կը տեսնուի , որ իւրաքանչիւր ընտանիք միացեալ էին ի ցեղ իրը մի մարմին՝ մէկու մը իշխանութեան տակ , որ երթմն թագաւոր կամ Միապետ ալ կոչուէր , բայց ընդհանրապէս Նահապետ էր , և իւր անունն կուտար իր հպատակ ժողովրդոց բնակութեանց տեղեաց : Այսպէս ահա կանգնեցան քաղաքք . որոց իւրաքանչիւրն նաև իւր շրջակայ տեղեաք յայլոց բաժանեալ և անկախ տէրութիւն մը ունէր : Փոքր Ասիա , Ափիկայ եղերքն , Միջերկրականն և Սկ ծովու եղերքն՝ և կղզիներն

կը բովանդակէին անթիւ բազմութեամբ իշխանութիւններ, և որ կը ձեանային մի քաղաքէ հանդերձ շրջակայ փոքրիկ տեղեաւ մը: Այսպէսէ էին ահա Փիւնիկեցիք ըստ վկայութեան Ստրարոնի, « Արատոս, կ'ըսէ, ունեցաւ ատեն մը իւր առանձին թագաւորներն, ըստ օրինակի ուրիշ քաղաքաց Փիւնիկեցոյ»: Պիխիտ ինն թագաւոր կը հաշուէ կիպրոսի փոքրիկ կղզոյն մէջ, և ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ թէ ի հին ժամանակս և անթիւ բազմութեամբ թագաւորներ պատիւ կ'ընդունէին պաշտաման՝ արուեստից ձեռօք»: Հին Յոնաստան թէպէտ փոքր է տարածութեամբ, այլ այնչափ տէրութիւններէ կազմեալ էր՝ որ պատմութիւնն 60 էն աւելի կը հաշուէ Տրոյից պաշարման ժամանակ: Զնոյնս կը հաստատէ Ս. Գիրքն, յորում հինդ թագաւորք կը յիշուին Քողովրդոմորայ իշխանութեան տակ, որք Ասորի էին ըստ Յովսեպոսի, և պատերազմի ելան ընդէմ Սոդոմացւոց, որոց վրայ չըս թագաւորք կ'իշխէին: Արդ սերնդոց աճերովս և բազմանալով, բազմապատկեցան և ընդարձակեցան քաղաքներն և նույցին փոքրիկ տէրութիւնները. ընտանիք փոխուեցան յազգս: որ յետոյ կազմեցին զքաղաքակիրթ ժողովուրդոս. քաղաքներն ալ փոխուեցան ի մեծ պետութիւնս. այսպէս ահա կը տեսնենք Ասորեստան, Պարսկաստան, Արարիա, Եզիդատոս, որոնք ամենահին ժամանակներէ ի վեր կ'երևին մեծ միապետութիւններ:

իսկ ուրիշ ընտանիքներ ալ Սենաարէն բաժնուելու ժամանակ՝ հաստատուն բնակութիւն մը չորոշեցին, ուստի և կազմեցին թափառիկ ցեղեր երկրիս վրայ, որոնք խանարածք են: Սոքա ստէպ փոխելով իրենց տեղն ըստ պիտոյից, պէտք է ըսենք որ նաև առաջինքն եղան կործանել զնահապետական իշխանութիւնն, ընտրելով իրենց փարչութեան զլուխ քաջափիրտ և արի անձինք՝ արիացընելու և իրենց առաջնորդելու համար ելուզակութեանց մէջ, ընդէմ ուրիշ թափառիկ ցեղերու, ինչպէս նաև մշակութեան պարապող ժողովրդոց. այս առաջնորդք բազաւոր կոչուեցան: Աստի սկսան առաջին յարձակմունք ընդէմ մշակող ժողովրդոց, և հաւանականար հովիւ ժողովուրդներն պէտք է առաջին աշխարհակալք եղած ըլլան: Այսպէս իրաւամբ կ'երևին ժողովուրդքն որ այս միջոցիս մէջ տիրեցին մասամբ եզիպտոսի: Այլ եթէ անկարող ըլլային տիրապետել մշակեալ երկիրներու, կը կողովատէին իրենց քաղաքները. ուստի և մշակող ցեղերն իրենց հունձքն պաշտպանելու և ապահովելու համար, կը հաւանէին տուրք մը վճարել, և աստի ելան հարկատու թագաւորք: Կարելի է որ Քողովրդոմոր առաջնորդ եղած ըլլայ թափառիկ ցեղերու, որ այս նպատակաւ Ասիա կ'արշաւէին: Այս թագաւորք իմաստ տկար էին մեծ գործերու ձեռնարկելու համար. և Արահամ կարող եղաւ 318 հոգւով յաղթանաւ-



կել և յըռուել թէ իրեն և թէ դաշնակցաց խումբը : Եթէ այսպիսի փառասիրական վախճան ունենային , ուրիշ ժողովուրդք չէին օգներ իրենց , իրեն գործի մը՝ որ ժամանակին կարօտութեանց անհամա ձայն էր , վասն զի իրենց վախճանն էր միայն կենսական պէտքերն ձեռք ձգել . իսրայէլացւոց Պաղեստինու մէջ գտած բազմաթիւ թա գաւողք կը ցուցընեն յայտնապէս թէ ինչպէս դեռ ևս պարագայք չէին այնքան նպաստամատոց միապետութեանց ընդարձակելուն , և թէ յիրաւի մեծամեծ իշխանութիւնք՝ ժամանակ անցնելէն եռքը կանգնեցան :

Այս ընտանիք՝ կամ նախկին ցեղերն որ միայն հովուութիւն կը նէին և ընդհանրապէս թափառիկ կետնք մը կը վարէին , կիսով չափ փոխուեցան յետոյ ի քաղաքակիրթ ժողովուրդս , մասամբ միայն պահելով և աճեցընելով գքաղաքականութիւն և զկրթութիւն նախկին՝ զոր ի նախնեաց իւրեանց ընդուներ էին :

Ուրիշ ընտանիք ալ բնակեցան անապատներու մէջ և գետեզերաց վրայ , ոչ երբէք ձեռաց ճարտարութեան հետամուտ ըլլալով , այլ զբաղելով միայն յորսորդութիւն և ի ձկնորսութիւն . և ասոնք ահա եղան բարբարոս ժողովուրդք : Այն կարծիքն՝ որ կը պաշտպանէ թէ բարբարոս ժողովուրդք ալ իրենց առաջին գոյութենէն սկսեալ պէտք կը զգային ամենայն ինչ ուսանելու , նոյն իսկ զեղզու , իրենց զգացմունքներն յայտնելու և ունեցած պիտոյքն բացատրելու համար , անընդունելի ենթադրութիւն մ'է և հակառակ ուղիղ բանի և ճշմարիտ հաւատոց , որ կը սորվեցընէ թէ մարդս ի սկզբանէ անտի իւր գոյութեան՝ ընդունեցաւ . յԱրարէն զպարգև բարբարոց , և ինչ լցոյն և հրահանգ որ անհրաժեշտ կարեւոր էին իւր քաղաքական և ընկերական վարչութեան և կրօնական հրահանգութեան համար : Իսկ թէ յետոյ մասամբ բարբարոսութեան վիճակի մէջ ինկաւ , պատճառը ալն այն էր որ չպահեց և չանցուց զիրահանգութիւն և զաւանդութիւն նախկին :

Շարունակելի